ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-652[1]-03.11.2014-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1 . «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ կետը լրացնել 9.1.1 ենթակետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

9.1.1	հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման համար՝ այդ թվում՝	
9.1.1.1	Երեւան քաղաքում եւ միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում ցանցի շահագործման համար՝ տարեկան բազային տուրքի	500-ապատիկի չափով
9.1.1.2	Երեւան քաղաքի տարածքում ցանցի շահագործման համար՝ տարեկան բազային տուրքի	300-ապատիկի չափով
9.1.1.3	Երեւան քաղաքը չներառող՝ մեկից ավելի մարզերի տարածքում ցանցի շահագործման համար՝ տարեկան բազային տուրքի	200-ապատիկի չափով
9.1.1.4	մեկ մարզի տարածքում ցանցի շահագործման համար՝ տարեկան բազային տուրքի	100-ապատիկի չափով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից: